Հաստատված է
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ամբիոնի 31.08.2020թ. նիստում **(արձ. թիվ 1)**
**Ամբիոնի պետի ժ/պ ________________ Հ.Խաչատրյան**
**31.08.2020թ.**

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
## ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ | | Վիկտիմոլոգիա |
| | | |
| ՖԱԿՈՒԼՏԵՏ | | Մագիստրատուրա, առկա ուսուցում |
| | | |
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | | Իրավագիտություն |
| | | |
| ԱՄԲԻՈՆ | | Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն<br>E-mail: qreakan@mail.ru |
| | | |
| ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ | | Մ.Մարկոսյան (ի. գ. թ., դոցենտ)<br>E-mail: misakmmm100@mail.ru, հեռ. 093 60 15 70 |
| | | |
| ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ | | 2-րդ կուրս, 3-րդ կիսամյակ |
| | | |
| ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ | | մագիստրատուրա |

| | | |
|---|---|---|
| ԿՐԵԴԻՏՆԵՐ | | **3 (երեք)** |
| | | |
| ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ | | «Վիկտիմոլոգիա» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 26 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունք, 58 ժամ ինքնուրույն աշխատանք:<br><br>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով: |
| | | |
| ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ | | Դասընթացը կառուցվում է «Քրեաբանության և հանցագործությունների պրոֆիլակտիկա» («Կրիմինոլոգիա») դասընթացների իմացության վրա: |
| | | |
| ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | | Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են վիկտիմոլոգիայի, որպես կրիմինոլոգիայի ինքնուրույն ուսմունքի, հիմնական դրույթները: |
| | | |

| | | |
|---|---|---|
| ՆՊԱՏԱԿ | | Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ Հայաստանի Հանրապետությունում վիկտիմալոգիական խնդիրների վերաբերյալ, մագիստրանտների մոտ գիտելիքներ ձևավորել վիկտիմալոգիայի տեսական և գործնական հիմ-նախնդիրների վերաբերյալ: |
| ԽՆԴԻՐՆԵՐ | | Դասընթացի խնդիրներն են՝<br>• ներկայացնել վիկտիմալոգիայի պատմությունը,<br>• բացահայտել վիկտիմալոգիայի առարկան և մեթոդաբանությունը,<br>• ներկայացնել հանցագործության տուժողների դասակարգումը և տիպաբանությունը,<br>• ներկայացնել վիկտիմալոգիական դետերմինիզմի տեսությունը,<br>• բացահայտել հանցավորության վիկտիմալոգիական կանխարգելման բնութագիրը եվ ուղղությունները,<br>• ներկայացնել առանձին հանցատեսակների վիկտիմալոգիական կանխարգելման առանձնահատկությունները: |
| | | |
| ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ<br><br>*Կարողանա*՝ | | 1. ներկայացնել վիկտիմոլոգիայի, որպես գիտության ձևավորման ու զարգացման հիմնական փուլերը,<br>2. ուրվագծել վիկտիմոլոգիայի ուսումնասիրության առարկան,<br>3. թվարկել վիկտիմոլոգիայի մեթոդները,<br>4. առանձնացնել տարբեր հիմքերով հանցագործության տուժողների դասակարգման խմբերը,<br>5. ներկայացնել հանցագործության տուժողների հիմնական տիպերը,<br>6. պարզաբանել վիկտիմալոգիական դետերմինիզմի տեսության հիմնական դրույթները,<br>7. մատնանշել հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելման սուբյեկտներին,<br>8. ներկայացնել առանձին հանցատեսակների վիկտիմալոգիական կանխարգելման առանձնահատկությունները: |

| | | |
|---|---|---|
| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | | |
| | | |
| **Հիմնական** | | 1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսությունները<br>2. Առաքելյան Ս. Վ. Կանանց իրավական պաշտպանությունը բռնությունից, - Եր., - Ասողիկ, - 2001:<br>3. Նալչաջյան Ա. Ա. Անձ, խմբային սոցիալականացում և հոգեբանական ադապտացիա / Պատ. խմբ. Ա. Ա. Լալայան,- Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1985:<br>4. Агафонов А. В. Половые преступления. – М.: Издательство Юрлитинформ, 2009<br>5. Аронсон Э., Уилсон Т., Эйкерт Р. Социальная психология. Психологические законы поведения человека в социуме. – СПб.: ПРАЙМ-ЕВРОЗНАК, 2002:<br>6. Будякова Т. П. Виктимологическая профилактика преступлений, причинивших моральный вред. Автореф. дис. ... докт. юрид. наук. Тамбов. – 2009:<br>7. Варчук Т. В., Вишневецкий К. В. Виктимология: учеб. пособие для студентов вузов, обучающихся по специальности «Юриспруденция» / Т. В. Варчук, К. В. Вишневец-кий; под. ред. С. Я. Лебедева. – М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2008: |

| | | |
|---|---|---|
| | | |
| | | |
| Լրացուցիչ | | 1. Вишневецкий К. В. Криминогенная виктимизация социальных групп в современном обществе. Автореф. дис. … докт. юрид. наук. М. – 2007:<br>2. Коновалов Н. Н. Потерпевшая от изнасилования: уголовно-правовые и кримино-логические аспекты. Автореф. дис. … канд. юрид. наук. Ставрополь, 2002:<br>3. Криминалогия: Учебник для вузов / под ред. проф. В. Д. Малкова – 2 - е изд., перераб. И доп. – М.: ЗАО Юстицинформ, 2006:<br>4. Лиманская И. А. Виктимологическая профилактика насильственных прес-туплений против личности. Дис. ... канд. юрид. наук. М., 2002:<br>5. Предупреждение преступлений и административных правонарушений органа-ми внутренних дел: Учебник для студентов вузов, обучающихся по специальностям Юриспруденция и Правоохранительная деятельность / Под. ред. Кикотя В. Я., Лебеде-ва С. Я. – М .: ЮНИТИ-ДАНА, 2009<br>6. Ривман Д. В. Криминальная виктимология. СПб.: Питер, 2002: |
| | | |

| | | |
|---|---|---|
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ | | Բաղադրիչ 1- 20% (Միջանկյալ 1)<br>Բաղադրիչ 2- 20% (Միջանկյալ 2)<br>Բաղադրիչ 3- 60% (ամփոփիչ քննություն) |
| | | |
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ | | (see table below) |
| | | |
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ | | Սովորողը դասընթացից կարող է  հանդես բերել մինչև 100% (20 միավոր) առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է սովորողի միջանկյալ և ամփոփիչ քննությունների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է վերոնշյալ բաղադրիչների հիման վրա: |
| | | |

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ:

| Գնահատման արդյունարար միավոր | Գնահատականը տառանշումով | | |
|---|---|---|---|
| 18-20 | Գերազանց | Միջանկյալ գնահաման միավոր | |
| 13-17 | Լավ | Հարց 1 | Հարց 2 |
| 8-12 | Բավարար | 2 միավոր | 2 միավոր |
| 0-7 | Անբավարար | | |
| 0 | Չներկայացած | | |
| | | | |

| ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
|---|---|---|
| | | Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին: |
| **Ներկայություն** | | Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: |
| **Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** | | Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: |
| **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ** | | Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:<br>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: |

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

| Թեմա 1<br>ՎԻԿՏԻՄԱԼՈԳԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ<br>(2 ժամ դասախոսություն) | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Վիկտիմալոգիական մտքի ծագումը:<br>2. Ժամանակակից վիկտիմալոգիական մտքի ձևավորման հիմնական փուլերը: | Հարցեր 1-2 – ներկայացվում է դասախոսություն:<br>Հարցեր 1-2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը նյութի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: |

| Թեմա 2<br>ՎԻԿՏԻՄԱԼՈԳԻԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ<br>(4 ժամ դասախոսություն) | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Վիկտիմալոգիայի առարկայի տարրերի ընդհանուր բնութագիրը:<br>2. Վիտիմալոգիական տեսության մեթոդաբանությունը:<br>3.Վիկտիմալոգիական տեսության տեղը քրեաբանությունում: | Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն:<br>Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: Ըստ նախապես տրված հանձնարարության՝ սովորողները խմբերով պատրաստում են զեկույցներ՝ նախապես տրված թեմաներով: |

| Թեմա 3<br>ԱՆՁԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՎԻԿՏԻՄԱԼՈԳԻԱ<br>(4 ժամ դասախոսություն) | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Հանցագործության տուժողների դասակարգումը և տիպաբանությունը:<br>2. Բնակչության ավանդական սոցիալ-ժողովրդագրական խմբերի քրեածին վիկտիմայնությունը: | Հարցեր 1-2 – ներկայացվում է դասախոսություն:<br>Հարց 1 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, դասախոսի կողմից նախապես ներկայացված իրավիճակային խնդիրներում որոշում են տուժողի տեսակը՝ ըստ դասակարգման հիմքերի: |

| Թեմա 4 |
|---|

| ՎԻԿՏԻՄԱԼՈԳԻԱԿԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԻԶՄԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ<br>**(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Հանցագործության կատարման մեխանիզմում վիկտիմագեն և հակավիկտիմագեն դետերմինանտները:<br>2. Վիկտիմայնության դետերմինացիան: | Հարցեր 1-2 – ներկայացվում է դասախոսություն:<br>Հարց 1. Ինքնուրույն աշխատանք. Սովորողները գրականության ուսումնասիրության հիման վրա մշակում են հանցագործության կատարման կոնկրետ իրավիճակներ և մատնանշում դրանց կատարման մեխանիզմում վիկտիմագեն և հակավիկտիմագեն դետերմինանտները:<br>Հարցեր 1-2. Սեմինար պարապմունք. Կատարվում է սովորողների հարցում դասախոսության ժամանակ ներկայացված հարցերի վերաբերյալ: Դրանից հետո սովորողները ներկայացնում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները և կազմակերպվում է դրանց խմբային քննարկում: |

| **Թեմա 5**<br>ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻԿՏԻՄԱԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ<br>**(4 ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Հանցագործությունների վիկտիմալոգիական կանխարգելման բնութագիրը:<br>2. Հանցագործությունների վիկտիմալոգիական կանխարգելման ուղղությունները: | Հարցեր 1-2 – ներկայացվում է դասախոսություն՝ շեշտադրումը կատարելով առավել խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1-2– ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, պատրաստում են զեկույցներ՝ նախապես տրված թեմաներով: |

| **Թեմա 6**<br>ԱՌԱՆՁԻՆ ՀԱՆՑԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԻԿՏԻՄԱԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ<br>**(8 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |

| | |
|---|---|
| 1. Մարդու դեմ ուղղված հանցագործությունների վիկտիմալոգիական կանխարգելման առանձնահատկությունները:<br>2. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վիկտիմալոգիական կանխարգելման առանձնահատկությունները:<br>3. Անզգույշ հանցագործությունների վիկտիմալոգիական կանխարգելման առանձնահատկությունները: | Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն:<br>Հարցեր 1-3 – ինքուրույն աշխատանք՝ սովորողները ըստ խմբերի պատրաստում են մեկական իրավիճակ թեմայի յուրաքանչյուր հարցի մասով՝ ներկայացնելով կատարված հանցագործության փաստական հանգամանքները և մատնանշում վիկտիմոլոգիական կանխարգելման այն հիմնական միջոցառումները, որոնք անհրաժեշտ էր կատարել տվյալ հանցանքի վիկտիմիոլոգիական կանխարգելման համար:<br>Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք: Սովորողները քննարկում են միմյանց կողմից պատրաստված իրավիճակները, փորձում մատնանշել առկա թերությունները ու սխալները: |

## Հարցաշար

### «Վիկտիմոլոգիա» առարկայի առաջին միջանկյալ քննության

1. Վիկտիմոլոգիական մտքի ծագումը:
2. Վիկտիմոլոգիական միտքը վերածննդի դարաշրջանում:
3. Վիկտիմոլոգիայի ուսումնասիրության առարկան:
4. Վիկտիմոլոգիական հետազոտություններում կոնկրետ սոցիոլոգիական մեթոդների օգտագործումը:
5. Տուժողների տիպերը ըստ Դ. Վ. Ռիվմանի:
6. Տուժողների տեսակները ըստ Վ. Ա. Տուլյակովի և Պ. Ս. Դագելի:
7. Խմբային և զանգվածային վիկտիմայնություն:
8. Վիկտիմիզացում:

## Հարցաշար

### «Վիկտիմոլոգիա» առարկայի երկրորդ միջանկյալ քննության

1.Վիկտիմածին և հակավիկտիմածին դետերմինանտները հանցագործության կատարման մեխանիզմում:
2. Վիկտիմոլոգիական իրադրություն:
3. Վիկտիմոլոգիական իրադրությունների դասակարգումը:
4. Վիկտիմայնության՝ որպես զանգվածային երևույթի պատճառականությունը:
5. Հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելման կազմակերպչական հիմքերը:
6. Հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելման մարտավարական և իրավական հիմքերը:
7. Հանցագործությունների ընդհանուր վիկտիմոլոգիական կանխարգելման միջոցառումները:
8. Հանցագործությունների անհատական վիկտիմոլոգիական կանխարգելման միջոցառումները:

## Հարցաշար

### «Վիկտիմոլոգիա» առարկայի կիսամյակային քննության

1. Վիկտիմոլոգիական մտքի ծագումը:
2. Վիկտիմոլոգիական միտքը վերածննդի դարաշրջանում:
3. Ժամանակակից վիկտիմոլոգիայի ծագումը:
4. Վիկտիմոլոգիական գաղափարները գեղարվեստական գրականության մեջ:
5. Վիկտիմոլոգիայի ուսումնասիրության առարկան:
6. Վիկտիմոլոգիական հետազոտություններում ճանաչողության ընդհանուր մեթոդների օգտագործումը:

7. Վիկտիմոլոգիական հետազոտություններում կոնկրետ սոցիոլոգիական մեթոդների օգտագործումը:
8. Հանցագործության տուժող:
9. Տուժողների տիպերը ըստ Դ. Վ. Ռիվմանի:
10. Տուժողների տեսակները ըստ Վ. Ա. Տուլյակովի և Պ. Ս. Դագելի:
11. Տուժողների տեսակները ըստ Պ. Ս. Դագելի:
12. Տուժողների տեսակները ըստ Վ. Ի. Պոլուբինսկու:
13. Վիկտիմայնության բնութագիրը:
14. Անհատական և տեսակային վիկտիմայնություն:
15. Խմբային և զանգվածային վիկտիմայնություն:
16. Վիկտիմիզացում:
17. Վիկտիմիզացման օբյեկտիվ տարրերը:
18. Վիկտիմիզացման սուբյեկտիվ տարրերը:
19. Վիկտիմածին և հակավիկտիմածին դետերմինանտները հանցագործության կատարման մեխանիզմում:
20. Վիկտիմային վարքի դրդապատճառները:
21. Վիկտիմոլոգիական իրադրություն:
22. Վիկտիմոլոգիական իրադրությունների դասակարգումը:
23. Վիկտիմայնության՝ որպես զանգվածային երևույթի պատճառականությունը:
24. Հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելման բնութագիրը:
25. Վիկտիմոլոգիական կանխարգելման հարաբերակցությունը հանցավորության կանխարգելման մյուս ուղղությունների հետ:
26. Հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելման կազմակերպչական հիմքերը:
27. Հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելման մարտավարական և իրավական հիմքերը:
28. Հանցագործությունների ընդհանուր վիկտիմոլոգիական կանխարգելում:
29. Հանցագործությունների ընդհանուր վիկտիմոլոգիական կանխարգելման միջոցառումները:
30. Հանցագործությունների անհատական վիկտիմոլոգիական կանխարգելում:
31. Հանցագործությունների անհատական վիկտիմոլոգիական կանխարգելման միջոցառումները:
32. Հայաստանի Հանրապետության ոստիկանության համայնքային ոստիկանության դերը հանցագործությունների անհատական վիկտիմոլոգիական կանխարգելման գործում:
33. Սպանությունների վիկտիմոլոգիական կանխարգելման ընդհանուր բնութագիրը:
34. Դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու վիկտիմոլոգիական կանխարգելման ընդհանուր բնութագիրը:
35. Սպանությունների տուժողների դասակարգումը:
36. Դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու տուժողների դասակարգումը:
37. Սպանությունների և դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու վիկտի-մոլոգիական կանխարգելման կազմակերպումը՝ ելնելով տուժողների դասակարգումից:
38. Դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու վիկտիմոլոգիական կանխարգելման կազմակերպումը՝ ելնելով տուժողների դասակարգումից:
39. Տուժողի անձը սեռական հանցագործության մեխանիզմում:
40. Տուժողի վարքը սեռական հանցագործության մեխանիզմում:
41. Տուժողի փոխհարաբերությունները հանցավորի հետ սեռական հանցագործության մեխանիզմում:
42. Սեռական հանցագործությունների ընդհանուր վիկտիմոլոգիական կանխարգելումը:
43. Սեռական դաստիարակության դերը սեռական հանցագործությունների ընդհանուր վիկտիմոլոգիական կանխարգելման կազմակերպման համար:
44. Վիկտիմոլոգիական դաստիարակության դերը սեռական հանցագործությունների ընդհանուր վիկտիմոլոգիական կանխարգելման կազմակերպման համար:
45. Սեռական հանցագործություններից պոտենցիալ տուժողների հայտնաբերման աշխատանքը:
46. Սեռական հանցագործությունների անհատական վիկտիմոլոգիական կանխարգելումը:
47. Սեռական հանցագործությունների անհետաձգելի վիկտիմոլոգիական կանխարգելումը:
48. Հանրային սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելումը:
49. Մասնավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր վիկտիմոլոգիական կանխարգելումը:
50. Մասնավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների անհատական վիկտիմոլոգիական կանխարգելումը:
51. Անզգուշությամբ մահ պատճառելու ընդհանուր վիկտիմոլոգիական կանխարգելումը:

52. Անզգուշությամբ մահ պատճառելու անհատական վիկտիմոլոգիական կան-խարգելումը:
53. Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների վիկտիմոլոգիական կան-խարգելումը:
54. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության և զանգվածային լրատվության միջոցների դերը ճանապարհատրանսպորտային հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելման գործում: